ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2018 թվականի N 47

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի մայիսի 25-ին՝ ժամը 11^{00}-ին, գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

   1) Դրամական օգնություն հատկացնելու մասին
   2) Համայնքային սեփականության հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին
   3) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու թույլատվություն տալու մասին
   4) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկվելիք հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. մայիսի 23

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2018 թվականի N 48

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Մելիք Մելիքյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքում գտնվող 0.52 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողում (ծածկագիր՝ 0202-0040, վկայական N 24062015-07-0059) գյուղմթերքների վերամշակման շինության և տնտեսական շինության շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Մելիք Մելիքյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Կառուցման համար օգտագործվող 300 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. մայիսի 24

ք. Նոր Արտամետ